ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

Երկարատև և ծանր հիվանդությունից հետո կյանքից հեռացավ Մաշտոցի անվան Մատենադարանի հնագույն աշխատակիցներից մեկը՝ բանասիրական գիտությունների դոկտոր Շուշանիկ Լևոնի Նազարյանը, որը մեծ վաստակ ունի միջնադարյան հայ գեղարվեստական գրական հուշարձանների ուսումնասիրման և հրատարակության ասպարեզում: Նրա բազմաթիվ հետազոտությունների և հրապարակումների շնորհիվ հայագիտության սեփականություն են դարձել ուշ միջնադարի, հատկապես բանաստեղծների ու տաղասացների լավագույն ստեղծագործությունները:

Իր գիտահետազոտական արգասաբեր տարիների ընթացքում նա երբեք չընթացավ տրորված ճանապարհով: Մատենադարանի, ինչպես նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության հարուստ հավաքածուների մեջ նա որոնում, հայտնաբերում էր գիտությանը սակավ հայտնի կամ լիովին անծանոթ մնացած գլխավորապես չափածո ստեղծագործություններ: Տքնաջան աշխատանքով նա վերծանում էր դրանք, արժեքավորում և ընթերցողների սեփականությունը դարձնում:

Շուշանիկ Նազարյանը ծնվել է 1913 թ. Էջմիածնում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի լեզվագիտական ֆակուլտետի գրական բաժինը: Նա իր ապագան տեսնում էր գիտության մեջ, ընդունվում է Երևանի համալսարանի ասպիրանտուրան և ավարտում այն: 1946 թ. մինչև կյանքի վերջին տարիները, ավելի քանի 50 տարի նա Մատենադարանի աշխատակից էր՝ սկզբում որպես գիտնական քարտուղար, ապա ավագ գիտական աշխատակից: 1952 թ. նա պաշտպանում է թեկնածուական, իսկ 1972 թ.՝ դոկտորական ատենախոսություն «Պետրոս Ղափանցի» թեմայով:

Այդ տարիներին Շ. Նազարյանը Հայաստանի ու սփյուռքի գիտական պարբերականներում («Բանբեր Մատենադարանի», «Պատմա-բանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բազմավեպ») տպագրում է հայ մատենագրության տարբեր հարցերին նվիրված գիտական արժեքավոր հոդվածներ:

Արգասաբեր է եղել Շ. Նազարյանի գիտական աշխատանքը Մատենադարանի մեկ այլ նշանավոր գիտնական Ասատուր Մնացականյանի հետ: Համատեղ նրանք ուսումնասիրել և լույս են ընծայել միջնադարի հայտնի բանաստեղծ Պաղտասար Դպիրի «Տաղիկներ սիրո և կարոտանաց», Նաղաշ Հովնաթանի բանաստեղծությունների ժողովածուն:

Լայն էր Շ. Նազարյանի գիտական հետաքրքրությունների ոլորտը: Նա հատկապես մեծ ուշադրություն է դարձրել XVIII դարի հայ գրականության զարգացման հարցերին: Դա հին ու նոր գրականությունների միջև ընկած անցումային մի բարդ շրջան է, որը քիչ էր ուսումնասիրված: Արդյունավետ են եղել նրա հետազոտությունների արդյունքները XVIII դարի հայ գրականության պարբերացման, պոեզիայի տարբեր հոսանքների զարգացման ընթացքի և հարակից հարցերի լուսաբանման գործում:

Միջնադարյան հայ գրականության բնագավառում ներդրած վաստակը արժանի ճանաչում է բերել Շ. Նազարյանին մեր հանրապետության գիտական շրջաններում: Նա հեղինակ է մեկ տասնյակից ավելի մենագրությունների և ավելի քան 80 գիտական հոդվածների:

Շ. Նազարյանը սկզբունքային գիտնական էր: Անմնացորդ նվիրված էր միջնադարյան հայ քնարերգության ուսումնասիրությանը և այն ժողովրդի սեփականությունը դարձնելու գործին:

Նրա հիշատակը միշտ վառ կմնա գործընկերների և ընթերցողների սրտերում:

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ